

Թաւրիզում 14 դրան
Փաղանկերում 20 դրան

Ա Ր Տ Ա Ս Ա Հ Մ Ա Ն

Ռաւաստան 4 բր. 50 կ.
Թաւրիզ 50 դրուշ
Ներուպա 12 ֆրանկ
Ամերիկա 2 տոլար 5 ս.

Յայտարութիւնների վճարը

Առաջին երեսում տողատեղը 5 շահի
Զորքող 3 »

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՖ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՖ

ՇԱՐԲԱԹԵՐԹ

ԱՋԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրումէ զրեւ պարզ, մաքուր և անպայման քղբի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոխախտութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք յուրի և յովի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ ուսով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձուում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսով:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրել յօդուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն դիմէ համարում պատասխանատու թիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս քաջատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտքէ մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

ՊԵՏՔ Է ՕՐԷՆՔ ԴԱՐՁՆԵԼ

«Միտք»ի 11 №-ում տպուած էր Ուրմից ստացուած մի թղթակցութիւն, տեղական «բժիշկների» շահատակութեանց և Դր. Փաքարզի այդ շահատակութեանց վերջ դնելու մասին:

Որքան մենք գիտենք, դա առաջին քայլն է Պարսկաստանում, որ գալիս է սանձ դնելու սուտ բժիշկների այն անյազ անորոշականներին, որոնք 100-աւոր թանկագին կեանքներ են կլանում: Իսկ առաջին յանդուգն փորձն է, որ գալիս է վախճան դնելու ինքնուս և ինքնահռչակ բժիշկների պրակտիկային և տեղական կառավարութեան ձեռքով պահանջ է դնում բժշկական իսկական վիճակների այն բոլորի համար, որոնք իրենց բժիշկ են յայտարարում:

Պէտք չկայ բնաւ մանրամասնութեան մէջ մտնելու և բացատրելու մեծ բարիքը Դր. Փաքարզի այս մարդասիրական քայլի: Եթէ Պարսկ. կայ մի բան, որ ամենից աւելի և ամենաանգութ կերպով ենթակայ է կամայականութեանց, անուշադրութեան և խորը մոռացութեան, դա մարդն է և մարդկային կեանքը: Ժամանակ է վերջապէս ուղղորդել ինքնիշխան մարդկային կեանքը և ասպարէզ բացել ներպայում ուսած և վկայեալ իսկական բժիշկների համար: Ժամանակ է վտարել իսպառ հեքիմներին, որոնք ոչ գիտութեան հոտն են առել և ոչ խղճահարութիւն են զգում մատաղ ու անմեղ կեանքեր միւս աշխարհն ուղարկելով:

Մենք հուշարեցինք ժողովուրդին միայնակ շատ բաներ աշխատեցինք թօթափել մեզանից, եթէ շատերն անել չկարողացանք, թող գոնէ անենք այս մէկը: Հրաւիրում ենք տիրող իշխանութեան ուղղորդութիւնը այստեղ ևս կիրառել այն խիստ օրէնքը-որ տիրում է ներպայում և Ռուսաստանում-որ առանց պատշաճ տուեալների ոչ դիւ չի թոյլատրում բժշկութեամբ պարապելու:

Այս մտքով մի կարևոր նամակ ևս տպուած է ներկայ համարում. ուստի լիալոյս ենք, որ մեր ջերմ ցանկութիւնները արձագանք կգրտեն իշխանութեանց կողմից և խիստ օրէնք դարձրած կտեսնենք մեր երկրում այն պահանջը, որ Ուրմիում առաջագրել է Դր. Փաքարզի:

Պէտք է ազատել հրաշագործութեան հասած բժշկական գիտութեան մեծ անունը իմաստակների վարկաբեկումներից և ճակագրականութեան պաշտամունքով տարուած խաւար ժողովրդին էլ բնութեացնել ճշմարիտ գիտութեան և նրա վկայեալ մշակներին:

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԻՆԱՆԴԻՍՆԵՐԸ

1809 թուականի մարտ ամսին Ֆինլանդիան մտաւ ռուսական կառավարութեան հովանաւորութեան ներքոյ: Նախան պատմական այս նշանաւոր դէպքը, Ֆինլանդիան մօտաւորապէս 700 տարուայ ընթացքում կազմելիս է եղել շուեդական թագաւորութեան մէկ մասը՝ վայելելով այն բոլոր իրաւունքները, որ վայելում էին յիշեալ թագաւորութեան միւս նահանգները: Ֆինլանդիան ստացաւ Շուեդիայից իւր կրօնը, իւր քաղաքակրթութիւնը, իւր ընկերավարական կազմակերպութիւնն ու իրաւական կարգը: Այս ընդարձակ ժամանակամիջոցում նա վայելում էր ինքնավարութեան բոլոր արտօնութիւնները: Ահաւասիկ այս հիման վրայ, և շնորհիւ այն ինքնավարութեան, որ Ադէլֆանդը Ա. կայսրը իւր և իւր բոլոր յաջորդների անունով վաւերացրեց ու ապահովեցրեց Ֆինլանդիայի համար, Ֆինլանդական ժողովուրդը՝ չընայելով յաճախական պատահած զօրաւորութիւններին ու խոչընդոտներին իրականացրեց իւր բոլոր գովելի յառաջադիմութիւնները: Բաւական է մի հարեանցի պատմական ուսումնասիրութիւն կատարել, համոզուելու համար, որ քաղաքակրթութեան տեսակէտից Ֆինլանդիան մի սկանդինաւեան երկիր է հանդիսանում, արեւմտեան ազգերին համահաւասար մի կրթութեամբ ու լուսաւորութեամբ ժողովուրդ՝ միևնոյն ժամանակ մի ազգութիւն՝ օժտուած իւր սեպհական ազգային առանձնայատկութիւններով: 1809 թուականին Բորգոյում տեղի ունեցած ազգային մեծ ժողովում ռուսական կառավարութիւնը վաւերացրեց է Ֆինլանդական ազգային ինքնավարութիւնը և շնորհում ուրիշ արտօնութիւններ, որոնց իրականացնելուց ֆինլանդացիները ժամանակին ահագին օգուտներ են ստացել: Ֆինլանդացիների մէջ հին ժամանակներից սկսած գոյութիւն ունէր, այսպէս կոչուած «ազգային մեծ ժողով», որ շուեդական նախնական սահմանադրական օրէնքների համաձայն, որ 1809 թուից գործածան Ֆինլանդիայի սեպհական սահմա-

նադրական օրէնքները, կարող էր գուհարուել միայն երկրի միապետի հրահանգներով: Այդ սահմանը, որ առաջին անգամ ինքը հաստատեց Ֆինլանդիայի յիշեալ ազգային սահմանադրական օրէնքները, խորասուզուած լինելով Նապոլէոնի դէմ մղելի պատերազմներով և տոգորուած լինելով այլ և այլ գաղափարներով բնաւին իրաւունք չտուեց իւր թագաւորութեան ժամանակամիջոցում, Ֆինլանդացիների այս «ազգային մեծ ժողովի» գումարմանը: Նիկողայոս Ա.-կայսրը միանգամայն հետամուտ եղաւ իւր նախորդի քաղաքականութեանը: Այսու ամենայնիւ այս երկու կայսրերը շարունակ ընդունում էին Ֆինլանդիայի «ազգային մեծ ժողովի» և սահմանադրական օրէնքների գոյութիւնը: Վերոյիշեալ պարագայի պատճառով Ֆինլանդիայում ազգային յառաջադիմական գործը կեանքի բոլոր տեսակէտներում 1809-թուականից սկսած մի տեսակ դատապարտուեցաւ ակամայ կանգ առնելու, որ տեղի մի քանի տասնեակ տարիներ: Այս չարաբախտ ժամանակամիջոցում ժողովրդի կենցաղավարական պայմանները բաւականին լաւ պատրաստուեցան ընդգրկելու ազգային այն մեծ վերածնութիւնը, որին մեծ զարկ տուեցին ֆինլանդացի հոշակաւոր բանաստեղծ Յուլիանէս Լիւդուիգ Բունէթերգի բազմաթիւ գրականական վաստակները և ազգային մեծ գործիչ Նիլս Լէօնրոթի հրաշալի բազմաբեղուն գործնութիւնը, որի արդասիւքն եղաւ նաև Ֆինլանդական ժողովրդի «ազգային վէպի» հոյակապ հրատարակութիւնը: Այս արդիւնաւոր ուղղութիւնը շարունակուեց մինչև Ադէլֆանդը Բ.-րդ կայսրի գահակալութիւնը, որի ժաղաւորութեան ժամանակամիջոցում ֆինլանդիան ըստեղծեց իրան համար ծաղկման և բեղմնաւոր գործունէութեան մի մեծ շրջան, որ յառաջացրեց ժողովրդի բոլոր խաւերում անկապտելի ոգևորութիւն, մտքի ընդհանուր յեղաշրջում և քաղաքական ինքնավարութիւն:

Վերջապէս 1863 թուականին ազգային մեծ ժողովը գումարուեցաւ նորից: Այդ սահմանը Բ. մարդասէր կայսրը, որ անձամբ ինքը նիստը բաց արեց, իւր արտասանած ճառի մէջ դիտմամբ բնորոշեց, որ Ֆինլանդիան մի սահմանադրական միապետութիւն է: 1867 թուականի ազգային մեծ ժողովը ձայների առաւելութեամբ վաւերացրեց մի ուրիշ օրէնք, որի գործութեամբ ազգային մեծ ժողովը պէտք է գումարուէր առնուազն իւրաքանչիւր հինգ տարին մի անգամ: 1882-թուից այս ժողովը տեղի էր ունենում իւրաքանչիւր երեք տարին մի անգամ: Ազգային մեծ ժողովի նիստերի կանոնա-

ւորութիւնը գործող կերպով նպաստեց լուսաւորութեան և գիտութիւնների ու արուեստների բարգաւաճման գործին Ֆինլանդիայի բոլոր ծայրերում: Շնորհիւ ազգային մեծ ժողովի խելացի գործունէութեան՝ կարճ ժամանակում երկրի ֆինանսական ոյժը զարգացաւ, տնտեսական բարգաւաճումը խոշորացաւ, ստեղծուեցաւ երկաթուղիների մի մեծ ցանց, ժամանակակից կատարելագործուած եղանակներ ներմուծուեցան երկրագործութեան և տնտեսագիտութեան բոլոր ճիւղերի մէջ, բացուեցան լաւ կազմակերպուած սկզբնական ուսումնարաններ, հիմնուեցան բազմաթիւ միջնակարգ ու բարձրագոյն դպրոցական հիմնարկութիւններ, որոնք զբաղման օժանդակութիւն էին ստանում կառավարութիւնից:

Դժբախտաբար այս երջանիկ և խոստումներով առատ արժանալի շատակ ժամանակամիջոցը Ֆինլանդիայի համար տեղի միայն քառորդ դար: Արդէն 1890 թուից սկսուեց յարձակումների մի շարան՝ յաղաքակրթութեան ձգտող Ֆինլանդիայի ազգային անհատականութեան դէմ: Այդ սահմանը Գ.-րդ թագաւորութեան ժամանակ այս ոչ արեւելական ձգտումները որոշ չափով սահմանափակուեցան, Ֆինլանդիան սկսեց ազատ շունչ քաշել շարունակ իւր հաւատարմի հպատակութեան զգացմունքներն արտայայտելով: Դժբաղդաբար այս ազատ շունչ քաշելը յարատեւ չեղաւ, Ֆինլանդիան Ադէլֆանդը Գ.-րդ կայսրի մահից յետոյ անհասկանալի պատճառներով շատ նշանաւոր արտօնութիւններից զրկուեցաւ:

(Շարունակելի)
Ֆրանսէզէից՝ Լ. Գ. Ուրգեանց

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՅԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ (ԹՂԹԻ ՎՐԱՅ *)

Համաձայն մեր խոստման՝ այժմ սկսենք «Սեան» ընկերութիւնից: Երբ հրապարակ է դուրս գալիս մի ընկերութիւն, նա ունենում է անշուշտ իր կանոնադրութիւնը, որով և պարտաւոր է ղեկավարուել: «Սեան» ընկերութիւնն ևս լինելով ժամանակի խոշոր առևտրական մի հիմնարկութիւն, ունէր և իր կանոնադրութիւնը:

Աւելորդ ենք համարում այդ ընկերութեան կանոնադրութիւնը մէջ բերել ամբողջութեամբ, և մանաւանդ քննադատել-լըրը մեռած մի մարմին: Մենք կրեքենք միայն այն յօդուածները, որոնք կապ կարող են ունենալ ընկերութեան դպրոցներին ունեցած պարտքի հետ:

(* Տես «ՄԻՏՖ» № 11

Յօդուած 13. Տէր մի արասցէ թէ ընկերութիւնը՝ խախտուած ? Գանազան պատճառներով և անհամաձայնութեամբ, ձայնի առակութեան 3) վրձնուած է կամ վերահաստատութիւնը կամ խախտուած, թէ խախտուած է նախ եւ առաջ սօրենի 3) պարսֆն է գործի վերաբերեալ պարսֆեր վնասել եւ ապա բաժանել մասնակիցներէր:

Յօդուած 14. Վարչութեան արած այն պարսֆեր, որոնք մնաց են ընկերութեան հաշուաւմասեանը, որոնք մասնակցի պարսֆն է, ոչ մի մասնակցի իրաւունք չունի պատասխանատու չլինել:

Հանձնագրութեան մէջ միայն վերոյիշեալ երկու յօդուածներն են որ կապ ունեն մեր սիւնի հետ:

Ինչպէս տեսնուած է ընթերցողը № 13 յօդուածը տրամադրուած է նախ եւ առաջ գործի վերաբերեալ պարսֆեր վնասել եւ ապա բաժանել մասնակցիցներէր ընկերութեան խախտուելու դէպքում, իսկ № 14 յօդուածը ընկերութեան հաշուաւմասեանը մտած բոլոր պարտքերի համար պատասխանատու է կացուցանում իւրաքանչիւր մասնակցի, շեշտելով որ ոչ մի մասնակցի իրաւունք չունի պատասխանատու չլինել:

Հետեւեալ «Սեան» ընկերութեան իւրաքանչիւր անգամը պատասխանատու է այդ ընկերութեան պարտքերի համար, ուրեմն պատասխանատու է նաեւ Արամեան դպրոցին ունեցած պարտքի համար. Արամեան դպրոցին, որ «Սեանի» պարտատէրերէր մէկն է և որի ունեցած պահանջը ընկերութեան հաշուաւմասեանում արձանագրուած է: Անշուշտ ընթերցողը համար ցանկալի կ'լինի իմանալ, թէ ովքեր են այդ պատասխանատուները, մանաւանդ թէ այդ պատասխանատուները ինչ չափով են նայել իրենց պատասխանատուութեան վրայ: Այդ իրաւացի հետաքրքրութեան բաւարարութիւն տուած լինելու համար, առաջ ենք բերում կանոնագրութիւնն ստորագրողների անուն և ազգանունները ախպէս ինչպէս որ ստորագրուած կան կանոնագրութեան մէջ:

- 1) Յակովբ Մել.-Սարգսեան (մեռել է),
 - 2) Մելքոն Մալախեան (մեռել է),
 - 3) Մատթէոս Ա. Յովսէփեան,
 - 4) Մաշատուր Միլոնեան,
 - 5) Յարութիւն Միրզայեան,
 - 6) Ալան Միլոնեան,
 - 7) Մաշատուր Մահմետի Անանեան,
 - 8) Ազաջան Մահմետի Անանեան
 - 9) Համբարձում Նազարէկեան,
 - 10) Անդրէաս Մելիք Անդրէասեան,
 - 11) Կարապետ Տէր-Յակովբեան,
 - 12) Գրիգոր Գրիգորեան,
 - 13) Յարութիւն Գրիգորեան,
 - 14) Գառնակ Միլոնեան,
 - 15) Արգուն ման Տէր-Յովսէփեան,
 - 16) Մաշատուր Գրիգորեան,
 - 17) Մարգար Կ. Նազարէկեանց:
- Ընդամենը 17 հոգի: Ու-

րեմն այդ տանկեթի հոգին պատասխանատու են ընկերութեան հաշուաւմասեանն անցած պարտքերի համար, հետեւեալը՝ նաեւ Արամեան: Գալոցին ունեցած պարտքի համար:

«Սեան» ընկերութիւնը անանկացաւ (չենք մտնում մանրամասնութեան մէջ, թէ իրական անանկութիւն էր, թէ խաբարութեամբ), հետեւեալը համաձայն կանոնագրութեան 13-երորդ յօդուածի, նախ եւ առաջ սօրենի պարսֆն էր գործի վերաբերեալ պարսֆեր վնասել եւ ապա բաժանել մասնակցիցներէր: Արգեօք այդպէս եղել է: Պատասխանը պարզ է.-Ոչ, երբ մի ընկերութեան գործերը կազմում են, անշուշտ այդ շատ լաւ յայտնի պիտի լինի ընկերութեան անդամներին, մանաւաղ կ'ենթոյնին, (որ այս դէպքում Թաւրիզն էր), տնօրէնին, հաշուապահին և Թաւրիզում գտնուող անդամներին: Այդ յայտնութիւնից յետոյ ինչէր մտնում անելու վարչութեան: Անշուշտ աշխատել, որքան որ հնարաւոր էր, որքան կարգնեցնել ընկերութիւնը եւ ազատել սնանկութիւնից, որն այնքան էլ պատուաւր չէինք տեսակի էլ լինի դա (անանկութիւնը), իսկ երբ տեսնան, որ անանկութիւնն անխուսափելի է, ինչ էք կարծում, արդեօք վարչութեան եթէ ոչ իրաւունք՝ զէթ բարոյական-պարտականութիւնը չէր նախ և առաջ դպրոցի հազար ու մի մոլնաքով խնդիր - աղայանով հաւաք գումարը ապահովեցնել: Ուրիշ խօսքով, նախքան անանկութեան յայտարարելը գալոցական գումարները յանձնել պատկանեալ վարչութիւններին: Հնարաւոր էր այդ անել, կհարցնեն շատերը: Այո, կպատասխանենք, հնարաւոր էր ոչ թէ նախաձեռն անանկութեան յայտարարութիւնը, այլ նաեւ անանկութիւնից յետոյ եւ: Այդպէս վարուել են անանկացած «Արարատ» և «Արար» ընկերութիւնները, որոնց մօտ գալոցական փողեր կային: Ազալով մօտաւոր փութելը, նրանք ազնուութիւն ունեցան վնասել գալոցի պարտքը նախքան անանկացելը: Բայց այդպէս չվարուեց «Սեան» ընկերութիւնը, թէպէտեւ հնարաւորութիւն ունէր այդպէս վարուելու: Բացի այն որ այդ չարեղի՝ այդ քանից աւելի դատաւարտեւրէր արեւ: Ամենայն առաւանձնութեամբ վնասել (կանխիկ և ապառիկ) յայտնի սեղանաւոր Հաջի Ալի Աբբարին ունեցած պարտքը, դեռ պարտքից մի քիչ էլ աւելի, իսկ գալոցները (Զաւաթի Արամեան և Ս. Անայեան, Կիււաթի Թամարեան և Հայկազեան) և Հայունեանց բարեգործական ընկերութիւնը մնացին վիզները ծածկ և գլուխները կոխ և շնորհիւ այդ բարեխղճ արարմունքի, այսօր փակման փութելը է սպառնում այդ հաստատութիւններին: Ժամանակի դպրոցի վարիչները

ցանկանալով մի կերպ գոյացնել դպրոցական գումարները, յաջողել են մուրհակներ առնել ընկերութեան անհամեմատ, մուրհակներ, որոնք ցարդ մնացել են անվճար և հանգիստ ննջում են Արամեան դպրոցի հոգաբարձութեան սօղում են ընկերութեան, սպասելով թէ երբ պէտք է իրենց վրայից փողին վերցուի և ազատուին ձանձրալի քնից ու տետրակներում տեղ գրաւելուց: Բաւական է դեռ երկար ժամանակ չի խանգարուել նրանց հանգիստ քունը, մանաւանդ մուրհակներն ստորագրողների անգործութիւնը...

Մուրհակներ են տուել հետեւեալները 1) Եղբար Գրիգոր և Յարութիւն Գրիգորեանց 39000 դրանի 2) Տիգրան Մել.- Չոքրաբեանը՝ 6000 դրանի 3) Եղբար Խալիլ Դիւան դրամի, 3) Եղբար Խալիլ և Աղաջան Միտ. Անանեանները՝ 7500 դրանի 4) Համբարձում Նազարէկեանը և Մաշատուր Միրզաեանը-այս վերջին երկուսը ազնուութիւն են ունեցել վնասել իրենց պարտքը և յետ ստանալ իրենց մուրհակները: Սեան ընկերութիւնը պարտք է եղել գալոցին 34093 դրան 35 կոպ. 1901 թ. Սեպտ. 1-ից, իսկ հոգաբարձութեան մօտ գտնուած մուրհակները ներկայումս 52500 դրանի են 1902 թ. Յունիս 1 թուակիր: Վաճառականապետ Պ. Չաքարիա Նազարէկեանի մի գրաւոր ծանօթութիւնից երևում է, որ այդ մուրհակներին համար ինքը ստորագրութիւն է տուել, որ այդ գումարներն ստանալուց նախ Արամեան գալոցի «Սեան» ընկերութիւնից ունեցած պահանջը պիտի վերցուէր տոկոսով միասին, մնացածից պիտի վճարուի հաշուէ. ընկերութեան պահանջը, ապա Կիււաթի Հայկազեան Թամարեան դպ. պահանջը: Վաճառականապետ պ. Նազարէկեանի ծանօթութիւնը մէջ բերինք նրա համար, որ ցոյց տանք, թէ մուրհակ տուողները յանձն են առել իրենց պարտքը («Սեան» ընկերութեան ունեցած մուրհակները դուրսած են «Սեան» ընկերութեան անունով) վնասել Արամեան Դպրոցին ի հաշիւ «Սեան» ընկերութեան ունեցած պարտքի և նոյն իսկ այդ առթիւ ստորագրութիւն են առել պ. Նազարէկեանից. նշանակում է այդ պարտքները իրենց պատասխանատու են համարել «Սեան» ընկերութեան գալոցներին ունեցած պարտքը և յանձն են առել վնասել այդ պարտքերը գալոցներին: Հապախեմ ցարդ չեն վնասել կամ չի պահանջուած: Չեն, վնասել կպատասխանենք, որովհետեւ չեն բարեխղճ, չէ որ ամեն մարդ ազատ է, ով ինչ իրաւունք ունի բռնաբար մէկի կամքի վրայ և ստիպել, որ նա վնաս իր մուրհակով պարսֆ, երբ նա ոչ մի կերպով տրամադիր չէ այդ անելու, մանաւանդ

որ հոգի չի, որ տայ պրծնի, դա փոք է, փող, հասկանում էք... Պահանջուել է.-այն և մի քանի անգամներ: Առաջնորդարանում քանիցս այդ առթիւ ժողովներ են եղել, արձանագրութիւն կազմուել, սակայն չար բախտի բերմամբ այդ արձանագրութիւններն անյայտացել են, իզուր դէս դէն են ընկնում, արխիւներ քրքրում, չկան և չկան: Սակայն ի մեծ դժբախտութիւն մուրհակ ստորագրողների, այդ մուրհակները խոհեմութիւն են համարել չանյայտանալ և հանգիստ մնալ հոգաբարձութեան տաքուկ ծրարներում, երեկ վստահ են եղել որ իրենց անհանգստացնող չի լինելու: Մուրհակ ստորագրողները հնարաւորութիւն ունին վնասելու: Այդ բաւական փափուկ հարց է: Որքան մեզ յաջողուեց տեղեկութիւններ հաւաքել, չար լեզուներ այդ հարցին դրական պատասխան են տալիս աւելի շուտ:

(Շարունակելի)

Տ. Կարեան.

ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ

Հինգշաբթի, ամսոյս 17-ին Հալախի Արամեան դպրոցի թատերաւարձում տեղի ունեցաւ յայտնի բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանի երեսնամայ գրական գործունէութեան առթիւ գեղարուեստական երեկոյթի պարահանդէս:

Յորելեանական հանդէսները Կովկասում, ինչպէս յետոյ իմացանք, յետաձգուած են եղել, սակայն Թաւրիզ իւր պարտքը կատարեց ժամանակին:

Այդ առթիւ ընտրուած յանձնաժողովը իր վրայ դրած պարտականութիւնը բարեխղճօրէն կատարեց, եթէ ի նկատի չառնենք մի քանի թերութիւններ: Դրական-Գեղարուեստական բաժինը կազմուած էին յորելեանի գրած բանաստեղծութիւններից և երգերից. բացի դրանցից կային նաեւ իմբական նուագաժողովի ջութակների վրայ, զուէտներ և մեներգներ: Դպրոցի երգեցիկ խումբը մասնակցում էր երեկոյթին ի պատիւ յորելեանի: Երգերը և նուագաժողովները զեկավարում էր Արամեան դպրոցի ուսուցիչ պ. Վաղինակ Յովսէփեանց:

Երեկոյթի սկզբում առաջնորդ հայրը հասարակութեան ծանօթացրեց ի մօտոյ շնորհալի բանաստեղծ Յ. Յովհաննիսեանի հետ, շեշտելով նրա բանաստեղծական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մի Գրքի

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ *)

«Ժագ Նօմման»

Փոխգրութիւնը սկսեց և եւ չափազանց տխուր տպաւորութեան տակ էի: Ինչ որ դեռ մեծ հօրեցս մնում էր, թուում էր որ կամաց-կամաց ցրւում, անհետանում էր: Մենակեղ ուր մօտ 30 երկար տարիներ ապրել ու գործել էր, կանոնաւոր կենցաղավարութեան հետքեր ու տպաւորութիւններ էր պարունակում, և ամեն բան որ վերցնում էին և ամեն պրոց որ բացում էին մի յիշատակ էր զարթեցնում մեր սրտում և մենք խորապէս զգացում էինք:

Եւ եւ երբեք այնքան լաւ չէի հասկացել թէ ինչ է ուզեցել ասել Վերգիլիոս իւր „Sunt lacrymae Rerum“ - առարկայը էլ արցունք ունեն աչքերում-խօսքով: Այո՛ այդ տեղ կուտակուած հազար ու մի ոչնչութիւններն էլ կարծես թէ անգթօրէն տանջւում էին այդպէս անխղճօրէն վերցնելով իրենց տեղերից, ուր նրանք հանգիստ նիւնում էին խոր և լռիկ մթնոթեան գրկում:

Մեզանից մէկը յանկարծ դարձանամար մի ճիշտ արձակեց՝ մատնանի ջոյց տալով ինձ

Տեւ «Միտք» № 11

- 2) արտագրուած ճիշտ համաձայն բնագրի
- 3) նոյնպէս

մեծ քանակով գրքեր, որոնք սնդուկի մի խորքում տեղաւորուած էին:

—Անո՛ր, ե՛կ այստեղ և նայի՛ր, բղաւեց յուզւած նա: Սլանալով գէպի մնդուկը եւ հիացմունքից քարացած մայրի կանգնած տեղաւ: Ո՛հ, սիրելի մեծ հայր... դու անզուգական թաքնախոր մարդ.- եւ տեսայ շարք շարք զետեղուած իմ „Միծեռնակներ“, ի դէպ, որքան, այդ փոքրիկ, սիրուն երկնագոյն կողքով հատորները. համարեա թէ իմ գրքի առաջին տպագրութիւնը ամբողջովին այնտեղ համարուած մնում էր.- այն հրատարակութիւնը, որ այնքան արագօրէն սպառուելու էր, որի մասին Պ. Մասօն իրաւամբ ասել էր „զննում են բայց ոչ մի խօսք էլ չեն ասում“: Եւ այժմ հասկացայ թէ ինչու համար չէին խօսում, որովհետեւ դա իմ բարի մեծ հայրն էր, որ մի առ մի նրանց գնել էր անմոռոնչ և անընդամի, նա էր այն անյաղ հասարակութիւնը, որ լափել, սպառել էր իմ գրքերը. եւ չափազանց յուզւած էի ի տես այն գիւտին և երկիւղածութեամբ ու բուռն երաստագիտութեան զգացմունքներով տողորուած ծնրադրեցի սուրբ յիշատակի առաջ և սկսեցի իմ „Միծեռնակներ“, համարումս այդ դէպքերը Թաւաշաւ անել: Նրանք բոլորն էլ չկորուած էին ի այն կապոյտ գոյնի կողքերով հազնւած էին, որ ինձ համար այն ատեն այնքան դիւրեկան էր: Եւ նրանցից ոմանք քաղաքի հեռուոր ան-

կիւնների գրադարաններից գնել էին, որպէս երևում էր իւրաքանչիւրի վրայ գառնուած գրօշմները: Հետաքրքրութեամբ զննելով այդ սիրուն հատորները իմ երեւակայութեանս մէջ կենդանանում էր այդ բարի մարդը, որ իւր արագ քայլերով Պարիզի չորս կողմը ման էր գալիս իր թոռնիկի հրատարակած հատորիկը գնելու համար: Եւ տեսնում էի նրան թէ ինչպէս նա մտնում էր գրավաճառանոցը պահանջելու հպարտօրէն Անուի Դիաէի „Միծեռնակներ“, և թէ որպիսի գոհունակութեամբ նա ամեն անգամ մի քանի օրինակ նրանցից գնելով և ինամօք գրադարանում տեղաւորելով տուն էր կրում մաս առ մաս ամբողջ հրատարակութիւնը, ինքնիկ քթի տակէն ծիծաղելով ինձ այսպիսի մի գուարձալի խաղաղաւուն համար:

Իմ աչքերի առաջը պատկերանում էր թէ ինչպէս նա-այդ բարի ծնրունիւն-տուն վերջապէս ուղղակի իւր սենեակը գալով շտապում էր իւր գրադարանի ծանր բեռը դարձնել, միւս օրը կրկին նրանց լցնելու համար իմ „Միծեռնակներով“... Եւ առաւել քան 15 երկար տարիների ընթացքում նա պահել էր իր գալտիները: Նա չէր ցանկացել առիթ տալ ինձ նրան շնորհակալութիւններով սողողելու, որին նա այնքան արժանի

էր: Այն ժամանակ եւ յիշեցի թէ ինչպէս նա ժպտագին ասել էր այն անմոռանալի օրը երբ եւ Պ. Մասօնց այդ աւետարեւր նամակը ընդունել էի:

—Դու երջանիկ եւ ուրեմն, սիրելի թոռնիկ, ինձ համար էլ դա է միայն ամենակարեւոր բանը:

Այո, եւ երջանիկ էի և երեսն անգամ բարեւաւոր, և իմ գրանից յետոյ ունեցած ոչ մի յաջողութիւնս չի հաւասարուել. բոլորովին այն անդուգական բաղձին, երբ եւ տեղեկացայ, որ իմ գրած առաջին գիրքը ըսպառուել էր այն սպառուել բայց ինչ հրաշքով, գիտեմ այս օր այդ գալտիները և դրա համար էլ սիրտս անհուն երաստագիտութեամբ և աչքերս արցունքներով լցւում են, ու եւ մտածում այդ մեծ բարեբարութեան մասին, որը, իբրեւի, մարդկային բնաւորութեանց ազնուագոյնը և առաքելութեան մեծ ծագումն է:

Անուի Դիաէի կտրելով խօսքը հաւաքանք մ'արձակեց. արտասուքի մի կաթիլ նրա այտերն ի վար գլորուեց և մենք բոլորս նրա շուրջ խորապէս զգացում էինք լռիկ և ուշադիր ականջ դնելով այս գեղեցիկ պատմութեանը:

Վերջ

Թրգւ. Ֆրանսերէնից

Մ. Բաղդասարեանց

Մեր առաջնորդարանը փոխանակագործ, Նալայի համար նախաժամանակ հրապարակում կարգադրում հոգաբարձական ընտրությունների համար, լաւ կլինէր նախօրոք կազմել Նալայի իսկական ծխականների մի ցուցակ, որոշելու թէ ովքեր են իրաւատէր գալու ընտրութեան ընտրելու և ընտրուելու համար, պէտք ունենալու և հրամայական է նախ աշխատանքով, որ չլրկնուին նախաժամանակների գաւազանաշարութիւնները, զօտով իրենց ընտրող հոգաւորներին կողմից և երկրորդ, որ որոշուի թէ միայն ծխական յայտնի տուրքերի և պարտաւորութեանց ենթակայ մարդիկ լոկ կարող են գալ ընտրութեան: Ով որոշ ծխական տուրքերի ենթակայ չէ և չի բաժանում մեղ հետ մեր համայնական եկեղեցական ծախսերը, նա ձայնի իրաւունք պիտի չունենայ: Պէտք է նշանակել որոշ նորմա, որ ըստ այնմ որոշուի, թէ ով է քուէի տէր և ով ոչ: Այս անյետաձգելի է մինչև ընտրութիւնը որպէս զի իւրաքանչիւր մի նորեկ պրետենզիաներ չյայտնի մեր գլխին, որպէս այդ արեւ են տարիներ շարունակ իրաւունք և անսկզբութեան դուռը հասցրել նորա երբեմնի մօտ 15,000 թումանի տէր եղող դպրոցները:

Մեզ յայտնում են և վերապահութեամբ հաղորդում ենք որ անցեալ կիւրակի-20 Մայիսի-կենտրոնականի պարտիզում, կենտրոնականի հոգաբարձուներից պ. Վ. Վարդանեանը, մի աղքատ տղի, որ առանց 5 շահի մուտքի դրամը վճարելու մտել էր այգի, վազել ըռնել և ծեծելով բերել գցել է գոռն մօտի սենեակը և շարունակել է երկար բռնկեցողով, ոտքով և փայտով ծեծել: Անց ու դարձ անող հասարակութիւնը եղել է լոկ հանդիսատես: Եկել է պ. Յ. Վարդանեանը, որ ազատել է շարքուած խեղճ մանկան և զայրոյթ յայտնել տղին զանաւորող պ. Վարդանի և պատահած հոգաբարձութեան այլ անդամի: Դէպքը բաւական ջաւալի է և անսպասելի:

Քէյվանցոց գործի համար նոր մանրամասնութիւններ իմանալու նպատակով, մենք գրաւոր դիմել էինք երկու պաշտօնական անձնաւորութեանց, սակայն ... պատասխան չստացանք: Մեր տեսածն ու յաճին է-Քէյվանցի մշտնջենական գետնի և եկեղեցու բակի զերեկմանաբարերի վրայ քարշ գալով: Գարիմ խանը օրը մէկ ձկն երգում և կերութիւն է յանձն առնում և հրաժարում: Երեւում է որ գործադրում է պարծիլական ձգձգման և յուսահատեցնող քաղաքականութիւնը, որ քանդուած գիւղայից թողնեն և փախչեն: Թշուառ Քէյվանցոց զրուցիւնը յուսահատական է: Ինչպէս իրենք են ասում-ձեռներն արդէն կտրուել է մեր բարձր իշխանութիւնից-Ուստի եկեղեցի օգնութիւն-այդ թշուառների համար: Մէջտեղում կայ Քէյվանցոց այդ գործերին հանդիպող դարձած խնդիրը, կան սպառնալիքների հարցեր, կան տղարանական հաշիւներ, կայ Դարադաղի այլ հարց, և ճանաճ այս բոլորին չի գումարում թեմ. խորհրդի կանոնաւոր նիստ ... իսկ թեմական ժողով ... հօ վաղուց է կազմալոյժ ... այսպէս ուր ենք գնում մենք: Եթէ Քէյվանցոց 150,000 թումանի փաստների լուրջ, կեանքի և մահու այս խնդրի գատաւարութիւնը այսպէս էր տարուելու հապա ինչ կլինէր այս Քէյվանցոց զրուցիւնը, եթէ համաձայն առաջնորդարանի հրահանգների, նոքա գային Թաւրիզ ձմեռ ժամանակ: Այն ժամանակ հիմակուայ պէս քաղժից բացի նոքա կմեռնէին և ցրտից ու անպարսպարութիւնից:

Քէյվանցոց խճճուած և յուսահատական զրուցիւնն հասած դատար կարծես բաւական չէ, դեռ «Թաւրիզի յայտարարութեանց» մէջ էլ կարգում ենք հրաւեր, որ Դուրուզեցիք ևս զան Թաւրիզ և առաջնորդարանի միջոցով

գատ սկսեն Իսկանդարիանի դէմ: Կարծում ենք կատարուածը բաւական է, պէտք չկայ մի երկրորդ Սեդան ևս ստեղծել առաջնորդարանի հեղինակութեան շուրջը՝ գաւառեցոց աչքում:

Մայիս 16-ին, իր. մանկավարժական ժողովի նիստում որոշուել է, Արամեան և Ս. Աննայեան երկուսն էլ զարգացնելու Ա. Բ. և Գ. դասարաններում լինեն դասարանական քննութիւններ: Գննութիւնները կատարուած են, և ցոյց տալիս գեղեցիկ յաջողութիւն և գոհացուցիչ տպաւորութիւն թողնում դասից եկողների վրայ ևս:

Ճանաճ երկիցս Սարգար Ռաշիդեց առնուած խիստ հեռագիրների Ահարի դատաւոր Սարգար Սաթվաթի վրայ, որ սա ձերբակալի Բերհիմ խանին և Հաթամխանին, որոնց դպրոցապետական գիւղերից ժամանակին զանաձաժ հարկերը և նոյա տուած ստացականները օրինական չիճանաչում արդի կտաւարութիւնը, Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը Մայիս 21-ին երրորդ անգամը լինելով, անձամբ դիմեց Սարգար Ռաշիդին և առաւ ամենախիստ մի հեռագիր Սարգար Սաթվաթի վրայ անձնականապէս՝ որ վերոյիշեալ խաները կենդանի կամ մեռելով իրեն ուղարկուեն Թաւրիզ, որպէս զի ինքն ազատուի զանգատուողների (իմա հոգաբարձութեան) ձեռքից: Սարգար Ռաշիդը բացի այդքան բարեհաճութիւնից, գալու ժամանակ աւելացրեց, որ հոգաբարձութիւնը միամիտ լինի, ուր որ լինի և ինչ էլ որ լինի նա այդ խաներին ձերբակալած բերել կտայ Թաւրիզ և կանի դպրոցների վնասը: Յայտնուեց ամենամեծ շնորհակալութիւն այդքան բարեացակամութեան համար: Մենք ևս շնորհակալութիւն ենք յայտնում Սարգարի այդքան հայասէր քաղաշահանութեան և սիրալիլ ուշադրութեան համար:

Լսում ենք այս ամսում առաջնորդարանը ուժիկների դիմաց բաց ունի մօտ 450 թիւ: Ստացուած չեն 2 ամսուայ ուժիկներ: Մենք քանի անգամ ալմար բարձրաձայնեցինք առաջնորդարանի պարտքերի մասին և փոխարէնը դժգոհութիւն և անբարեհաճութիւն լսեցինք:

Ամսոյս 21-ին քաղաքիս բոլոր հիպոտոնները հրաւիրուած էին ընթերցել Ծօղա-էդ-Դովլի մօտ:

Մեզ հաղորդում են, որ կենտրոնականում մի ամբողջ դասարան մնում է չփոխուած: Զ. դասարանցիք իսպառ թողին կենտրոնականը՝ չտալով քննութիւն: Լսում ենք, որ Ե. դասարանցիք այլոց մօտ գնալով յայտնել են, որ իրենց կարգին չեն սովորեցրել Ռուսերէն և Փրանսերէն, իսկ Պարսկերէնի հան արդէն յայտնի է. Հապա ուրիշ լինչէ կատարուած այդ մեծանուն և հազարներ կանող դպրոցում:

Զ. Թաւրիզի տիկնոջ մի խումբ վաղը ժամի 4-ին Նալայի Արամեան դպրոցի թատերասրահում տօնում է, ՄՇԱԿ-ի 40 ամեայ յորելեանը, մուտքը ձրի է:

Տեղի սղութեան պատճառով, ՄՇԱԿ-ի հայ հասարակութեան ուղղած կոչը մնաց յաջորդ համարին:

Սոյն համարի յաւելուածը լոյս է տեսել մի շաբաթ առաջ - Մ. 19-ին և ցրուել է քաղաքի բաժանորդներին և ուղարկուել խմբագրութեանց:

Պ Օ Ս Ս Ա Ր Կ Ղ

Սպահան-պ. Ն. Դաւթեանին: Շնորհակալութեամբ ստացել ենք հեռագրով փոխադրած Ձեր 60 թումանը: Մարդա-պ. պ. Պ. Հ.-ին և Ա. Կ-ին ստացել ենք ձեր 20-ական դոան բաժանեցները:

Խմբագիր-հրատարակիչ՝

Ա. Տ. Վարդանեանց

Յ Ե Յ Տ Ե Լ Ե Լ Թ Ի Ի Ն Ե Լ

MAFASIANE NAPIKIANE

PROPRIETAIRES J. D. THOMASSIAN



Փ Ե Լ Ի Զ Մ Ե Գ Ե Զ Ի Ն

Կ Ա Ն Ա Յ Ի Ն Ո Ր Բ Լ Ո Ւ Զ Ն Ե Լ

Շ Ա Լ Ե Լ Ե Ի Փ Ե Շ Ե Լ

Ե Ի Ն Ո Ր Կ Տ Ո Ր Ն Ե Լ

Նոյնպէս տերմօսներ, որոնք տաք կամ սառը ջուրը 24 ժամ

նոյն տեմպերատուրում պահելու յատկութիւն ունին:

Շ Տ Ա Պ Ե Ց Ի Ք Օ Գ Տ Ո Ւ Ե Լ Ա Ռ Ի Թ Ի Ց



Գ Ա Ր Ո Ւ Ն

(Մ Ա Գ Ա Զ Ի Ն Մ Ի Ս Ա Կ Բ Ժ Շ Կ Ե Ա Ն Ի)

Նոր ստացւել են ՄԵՏԵԼՍԵՆ ԸՆՏԻՐ ԲԼՈՒԶՆՈՒՆԵՐ, ՍՊԻՏԵԿ ԼԵՌ ԳԵՐԵՆԵՐ, տղամարդկանց ԿՈՑՏ ԳԼՍԵԿԵՐ, ԵՐԿՈՑԵԿ ՎԵՐՇՆԵԿԵՐ, ճաշակաւոր ԳԵԼՍՈՒԿԵՐ, անձեռոցիկներ, երեսիկների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ: Ընդունելով ԵՐԵՎԱՆԻ ՍԵՐԵՆՈՎՆԵՐԻ ԸՍԿՈՒՆԵՐԻ ՏԵՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պապիրոսների պապիրոսների և ծխախոտների պատէշները: Պատէշներ կարելի է տալ 50000 հատից սկսած. իբրև կանխավճար վերցնում ենք 100-ին 15 0 | 0 գները հաշուում ենք գործարանի հաշուով, ցանկացողները կարող են վերցնել պրէյսկուրանտ:

Թ Ե Լ Ի Ի Զ Ի Ք Ե Լ Ե Լ Թ Ի Ի Ն Ե Լ
Հ Ի Ի Ա Ն Դ Ա Ն Ո Ց

Վերսկսուել է երթևեկ և գիշերօթիկ հիւանդների ընդունելութիւնը ամենաին օր առ. ժ. 10—12:

Այն աղքատները, որոնք պ. Բայլարբեցի վկայական կունենան, կը բժշկուին ձրի:

Հիւանդանոցի կառավարիչ Բժիշկ

Վահան Գեորգեան

مريضخانه تبریز

این روزها شروع کرده ایم به معالجه هر قسم مرضی مقيم و غير مقيم را هر روز پذيرای خواهد شد در مريضخانه از دو ساعت بطهر مانده الى ظهر و مرضی بی بضاعت هرگاه از بکریکی کرى نوشته بیاورند مقيم و غير مقيم مجانی به کمال مواظبت و اهتمام معالجه خواهد شد مدير مريضخانه دکتر واهان کوریکيان

ТАВРИЭСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стационарный прием-больныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.

Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются бесплатно

Завѣдующій больницей докторъ Ваганъ Геворковъ

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

„ՓՈՐԶ“

Գիտական, Գրական, Գեղարուեստական և Ժողովրդական երկամսեայ հանդէս, բովանդակութիւնը այլ համարով: Բաժանեցին է տարեկան Պարսկաստանի համար ... 15 դոան Ռուսաստանի ... 4 բուրլի

հարկաւոր են գործակալներ. հասցէ Rédaction «Portz» 5, Rue Fonténile-5 Montpelliér (France)

Խմբ. Հրատարակիչ՝ Ս. Տէր Բաղդասարեան

սպարան, ՓՍ. Ր Ո Ս

Նայիր - Սալթանէի Եւրոպա դնալու ծրագիրը հետզհետէ դժուարութիւններէ է հանդիպում: Եւ հաւանական է, որ նոյն իսկ խանգարուի, որովհետեւ Ռուսաց և Անգլիացոց դեսպանները վերջերս սկսել են լուրջ կերպով ուշադրութեան արժանի հարցը և դիտել են տուել Նայիր Սալթանէին, թէ իր ծրագրով ճամբորդութիւնը, երկրի արդի քաղաքական վիճակով, աննպատակաւարմար է և նոյն իսկ վտանգաւոր:

* * *

Ի պատասխան Հ. Յ. Դ-ն տեղիս կօմիտէի առաջադրած մի շարք պահանջներէ (!) կենտրոնական կառավարութիւնը ծառայութիւնից արձակել է բոլոր հայ ժանդարմներին, յայտարարելով թէ պետութեան մէջ պետութիւն ունենալ չի կարելի և թէ պետութիւնը գուտ պետական ծառայողների պէտք ունի և ոչ թէ որեւէ կօմիտէի հրահանգներով ղեկավարուող հակապետական մի տարրի: Եւ թէ ինքը չի ցանկանում Դաշակցական միջամտութիւն ունենալ պետական գործերի մէջ:

Մաքսատան ծառայութիւնից ևս արձակուել են բաւական թուով հայ ծառայողներ: Իսկ անուղղակի հարկերի վարչութիւններից ևս սպասուում է հայ ծառայողների հեռացումը: Եւ այս միջոցներին դիմում է կենտրոնական կառավարութիւնը հիմնուելով այն կասկածի վրայ, որ նա (կառավարութիւնը), և համայն ժողովուրդը սկսել է ցուցադրել հանդէպ հայութեան, որովհետեւ ինչպէս ասում են պարսիկները (հարկաւ այս խօսքերը անհեթեթ են և արտաւոյց) իբրեւ թէ հայերը երկիրը յանձնեցին Ռուսներին, երբ զինուած էին մեր գէնքով և փողովը, իսկ այժմ որ նորանց մասնակցութիւնը ևս պէտք է երկիրը խաղաղացնելու համար, մի ինչ որ կօմիտէի հրահանգով կուռուղ հայերը խումբ խումբ լքում են պատերազմի դաշտը . . .

Որպէս ապացոյց հայերի Ռուս քաղաքականութեան մերձեցնալուն, Պարսիկները մատնանշում են այն հանգամանքի վրայ, որ Թէհրանի Ռուսական Իղբալ դպրոցում ցարդ հայ ուսանող չէր ընդունուում, մինչդեռ այժմ մուտքը ազատ է հայերի համար: Թէև նորածին կասկածին զուգահեռապէս այս հանգամանքը նոյնքան արտաւոյց է, որքան հայերի Պարսկաստանը Ռուսներին յանձնելու անհիմն մեղադրանքը, բայց և այնպէս իրողութիւնն այն է, որ արդի Ռուս դեսպանը յայտնել է թէ հայերը ուշիմ մի տարր են, հետեւաբար հրահանգել է Իղբալ դպրոցի վարչութեանը հայ ուսանողներ ընդունելու: Այնպէս որ այս հարցը զուրկ է որևէ քաղաքական միտումներից:

Խոստովանելու կէտը որ կայ, այն է թէ հայ կուռուղ տարրը Պարսկաստանի բարե-

փոխութեան և ազատագրութեան զինուած պայքարում իր բաժնից և սահմանից շատ այն կողմն անցաւ և անհատական ու կուսակցական շահերի առաջ գոհարեց պատին ու պրեստիժը Պարսկահայի, նորան ենթարկելով այս օրուան արեւնոտ կասկածին:

Եթէ հայ կուռուղ տարրերը խոհեմութիւն ունենային սահմանադրութեան վերահաստատումից յետոյ հեռանալ ասպարիզից, և չհետեւել անհասկանալի կուսակցական գանգաւ փառախոխական նպատակաւորութիւն ու միտումների, պարսկահայն այսօր ազատ կլինէր այն դաւաճանական կասկածանքի խարանից, որ գրեթէ պարսիկն է գալիս զինուել նորա ճակատին:

Արդեօք այս նախատիւնը, մեր ճակատին դրուած դաւաճանութեան այս կնիքն էլ չպիտի կարողանայ մեզ խելքի բերել: ¹⁾

Իցիւ թէ յետ կենայինք կորստեան անդունդից, քանի չենք ուշացել. բայց դժբախտաբար հայկական մեծամեծութիւնը դեռ մեզ հետ շատ հաշիւներ ունի մաքրելու . . .

* * *

Այս օր Համադանի և Արաղի կողմերից մի խումբ հայ կուռուղներ վերադարձան, որոնք ըստ Հ. Յ. Դ-ն կոչի, մերժեցին մասնակցել Եփրեմի կուռուղներին, որով այս վերջինս այժմ կուռուղների մէջ մնում է գրեթէ միայնակ:

Ս. Փայլակ.

Թէհրան 2/15 Մայիսի 1912 թ.

ԼՈՒՐԵՐ

Կարեւոր լուր

Այս րոպէիս լուր հասաւ, որ Սալարէ Դովլէի դէմ գնացած ազատական բանակը Համադանի մէջ Եփրեմի պահելով թոյլ չի տալիս քաղաքից դուրս գալու յայտարարելով, որ քանի որ ինքն է եղել Մեջլիսի փակման և մամուլի ճնշման դաւաճան ²⁾ հեղինակը, հետեւաբար նա ինքը պիտի վերադառնալ տայ Մեջլիսը և ազատութիւն տայ մամուլին:

Այս հարցի մանրամասնութիւնը շուտով կհարդրուի:

Եփրեմը հեռագրով հրահանգել է տեղիս ոստիկանութեանը՝ ձերբակալելու այն բոլոր հայ յեղադրերը՝ Հ. Յ. Դ. զինուորները՝ որոնք Եփրեմին թողնելով հեռացել են Համադանից:

Ս. Փայլակ.

1) Քանի իմաստակները, տգէտները և նեղն ընկած ժամանակ օտար դրօշակների տակ ապաստանող անկոչ «փրկիչները» կլինին պարսկահայի առաջնորդները՝ մենք խելքի գալ և փորձանքից ազատուել չունինք: Ժ. Խ.

2) «Մշակում» ևս նման բովանդակութեամբ Հ. Յ. Դ. մի թուղթիկ էր առաջ բերուած, որով Եփրեմին «դաւաճան» էին հռչակել, նորա՝ «կառավարութեան բեպարխիաներին» մասնակցած լինելու համար. սակայն վերջը միջադէպը հարթուել է: Ժ. Խ.

Ամսի 13-ին Լիւաւի թաղի Ս. Սարգիս եկեղեցում Եփրեմի համար իւր ընկերների կողմից կատարուեց հոգեհանգիստ: Մեզ հաղորդում են, որ զբոսում էին պատկեր, Հ. Յ. Դ. Ատրպատականի կետ. կօմիտէի և զանազան խմբերի, ընկերների և մի պարսիկ դպրոցի կողմից:

Մեզ հաղորդում են, որ հոգեհանգիստին խօսել են Լիւաւայի դպրոցի տեսուչ Կ. Պիտեանը և պ. Խաչիկը: Լաւ է խօսել վերջինը: Առաջինը, ինչպէս միշտ, միայն իր խօսելու անկարողութեամբ ցոյց է տուել, թէ ինչպէս այդ ընդունակութեան տէր մարդիկ հրամայաբար խոյս պիտի ան հառելու անտեղի փորձերից:

Շօշա-էդ-Դովլի կողմից ձերբակալուած էր մի անմեղ գերձակ Պետրոս Խաչիկեան անուամբ, այն ամբաստանութեամբ, թէ իբրեւ նրա մօտ ժողով է եղել: Իրողութիւնն այն է, որ նրա նշան դրէքի ժամանակ եղել է հաւաքում և ուրախութիւն: Եղած ջերմ միջնորդութեանց շնորհիւ, ազատ արձակուեց այն պայմանով, որ նա այլևս Թաւրիզում չմնայ: Ըստ պատուոյ լուրերի, նրա ձերբակալութիւնը կապ ունի կատարուած հոգեհանգիստի հանգամանքների հետ: Որքան բան կայ, որ մենք եթէ չանենք և չխօսենք՝ ուրիշների դժբաղդութեանց պատճառ չենք լինի: Տակտ ասած բանը մեզանում համարում է ընկալիչներութիւն, իսկ անմտութիւն, տաք գլուխութիւն և անշրջանայեցութիւնը՝ «յեղափոխականութիւն»:

Հայկական և այն էլ Թաւրիզեան մի «բարձրապաշտօն» և ինքնատիպ մի Բուրջ և մեր մասին «Ազատամարտ»-ի 884 թիւում հռչակել է մի նոր «անողոր» դաշնակցականավայել մերկացում: «Միտք»-ի առաջիկայ համարում ասպարէզ կզանք այս նորանշան և «անտու» հայ մանկավարժ Էսիշիկի-ի «կարեւոր» հաղորդագրութեան դէմ և մի աւելորդ անգամ կխաբանենք այն անխախտի և փափկատեսակ կաշուով շերտաւորուած ճակատները, որոնք բնաւ չկարմրեցին, չխրատուեցին յաղթական Սպանդարեանի ազմկալից և հանուր Դաշակցութեան համար սոսկալի ու անլուր ինքնախայտառակմամբ վերջացած ստանալու ու չարամտօրէն դարձնած իրենց զրպարտաբանութիւնից:

Արամեան դպրոցի Դարադպրում ունեցած գիւղերից հողեր սեպհականացնող Իսկանդար խան Նիթֆ-Ալի-խանեանը Սարգար Ռաշիտի հրամանով շղթայակալ բերուել է Թաւրիզ, դատի ենթարկելու ըստ առաջնորդարանի պահանջման: Փաստն ակնհեր է և անուրանալի: Նման դէպքեր ուժեղ Մամադ Ալիի գահաժառանգութեան օրով իսկ կատարուած չեն: Եւ այսպիսի փաստերի արձանագրութեան համար մենք ու դժբախտ Հայկազունը արժանացել ենք բարեպաշտու Վառնեան Սափակ-Արծիւեան և տիրահաշակ Զարգարեանի չնաշխարհիկ օրգանի հոգեհանգիստ x-ի ամբաստանութեանց, որովհետեւ յանգնել ենք չներողել «փրկիչներին» blackhand-ական ընտանիքական ակտերը, որովհետեւ յանդգնել ենք աչքի առջև կատարուած մերկ փաստերը արձանագրել:

Նեմեզիդականներ, ուրախ ենք, որ ինքներդ նորէն առիթ էք տալիս մեզ կրկին ձեր ամբառալ ճակտին մի աղուխաղորդմ կնքելու և յաղթականօրէն՝ ի բարձանց նայելու ձեր ամօթապարտ (այլոց աչքով վերցրած-դուք չէք զգում ամօթ) ու երկրահայեաց մաղձալից դէմքերին:

Խմբագիր—հրատարակիչ՝
Ս. Տ. Վարդանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԵՐԻՉ ՄԵՔԱՋԻՆ

ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒՋՆԵՐ

ՇԱԼԵՐ ԵՒ ՓԷՇԵՐ

ԵՒ ՆՈՐ ԿՏՈՐ ՆԵՐ



ԳԱՐՈՒՆ

(ՄԱԳԱՋԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Նոր ստացւել են ՄԵՏԵՔՍԵՆ ԲՆՏԻ ԲԼՈՒՋՆՈՒՆԵՐ, ՍՊԻՏԵԿ ԼԵՒ ՔԵՓԵՆԵՐ, տղամարդկանց ԿՈՑՑ ԳԼՈՒԿՆԵՐ, ԵՐԿՈՒՏԵԿ ՎԵՐՏԵՆԿՆԵՐ, ճաշակաւոր ԳԼՈՒՍՈՒԿՆԵՐ, անձեռոցիկներ, երեխաների զլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ:

Ընդունելով ԵՐԿՐԵՔ ՍԵՏԵՔՍԵՆՆԵՐԻ ԼՈՒՍՏԵՔՎԱՆ ՏԵՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի դիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պապիրոսների պապիրոսների և ծխախոտների պատւէրները: Պատւէրները կարելի է տալ 50000 հատից սկսած. իբրեւ կանխավճար վերցնում ենք 100-ին 150 | 0 դները հաշուում ենք գործարանի հաշուով, ցանկացողները կարող են վերցնել պրէսկուրանտ:

Նոյնպէս տերմօսներ, որոնք տաք կամ սառը ջուրը 24 ժամ

նոյն տեմպերատուրում պահելու յատկութիւն ունին:

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

«ՄԻՏՔ»-ի տպագրութիւնը № 13-ից փոխադրած լինելով «ՓԱՐՈՍ» տպարանը, առաջացել են մեզ համար մի քանի դժուարութիւններ որոնք կհարթուեն շուտով և թերթը լոյս կտեսնի Մայիս 25 -ից սկսեալ: Խմբ.

